

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԱԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՍՈՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԼԵՅՏԵՆԱՆՏ
Ս. Մ. ՕՂԱՆՅԱՆ

ՍՍՈՒՍ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ



9(47.925)

5045

Սրահանդամ, Գ:

4-93

Առկապանակ

Սրահանդամ

հերոս

Արթուր

Օհանյան,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԵՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9(47.925)27

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Լրաց,

355.331(092 0 հունգարա) 1943

9(47)27

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Հ Ե Ր Ո Ս

ՍԵՐԳԵՅ ՕՀԱՆՅԱՆ

50/15

$\frac{I}{6915}$

A



ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԵՐԵՎԱՆ 1 9 4 3

Մերիա՝ խմբագրությունը ակադ. Հ. ՕՐԲԵԼՈՒ,

Հասկիկը՝ Եկադիս Մ. Ն. ՄՈԽԻ

Армянский Филиал Академии Наук СССР

Боевые подвиги сынов Армении

Г. СТЕПАНЯН

ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА

СЕРГЕЙ ОГАНЯН


(На армянском яз.)

Изд. Армфан. Ереван, 1943

Վ.Ֆ 02577, պատվեր 402, տիրաժ 4000.

Ստորագրված է տպելու 27 հունիսի 1943 թ.

ՆԳՖԿ Վարչաձևերի տպարան, Երևան.



Սերգեյ Մամբրեի Օհանյանը ծնվել է
Թբիլիսիում 1921 թվականի փետրվարի
23-ին, վաղոճավարի ընտանիքում:

Նրա հայրը՝ Մամբրեն, որ Իգլիբից Թբի-
լիսի է եկել 1905 թվականին, ուսուցչի աշ-
խատանքից օրերին, աշխատավոր մարդու
լավագույն ախպարներից մեկն է: Նա սովե-
տական իշխանության տարիներին մտնե-
լով բոլշևիկների պարտիայի մեջ, մինչև իր
հյանքի վերջը՝ 1940 թվականը՝ ջերմ նվիր-
վածությամբ ծառայեց Լենինի-Ստալինի
պարտիային:

Սերգեյի մայրը՝ Աղնիմը էլ բնիկ Թբիլի-
սեցի է: Նա էլ Անդրկովկաս է եկել էրզրու-
մից 1910 թվականին և ամուսնացել վա-
ղոճավար Մամբրեի հետ: Աղնիվը գրագետ,
դաստիարակված էին է եղել, լավ ծանոթ
մայրենի լեզվին ու գրականությանը: Նա մի-
քանի տարի նույնիսկ եղել է հայոց լեզվի
ուսուցչուհի:

Ահա այսպիսի ընտանիքում է մեծանում Սարգիսը: Նա փոքր հասակից մորից սովորում է մայրենի լեզուն և սիրում այն, հափըշտակությամբ լսում իր բազմաչարչար ժողովրդի անցյալի տխուր պատմությունը:

1927 թվականին Սարգսի ծնողները նրան ուղարկում են Թբիլիսիի № 82 հայկական դպրոցը: Աշակերտական նստարանի առաջին տարիներից Սարգիսը սովորում է մեծ ջանասիրությամբ, հատուկ ուշադրություն դարձնելով հատկապես մաթեմատիկական առարկաների վրա: Ամբողջ 8 տարի հաճախում է այդ դպրոցը: Թե՛ տանը և թե՛ դպրոցում բոլորը սիրում են նրան, սիրում են ոչ միայն ծնողներն ու ազգականները, այլև բոլոր հարևանները: Նրա մանկական անմեղ չարաճճիությունները, որոնք մինչև այժմ էլ հաճույքով պատմվում են Օհանյանների հարևանների կողմից, ավելի էին մարդկանց կապում այդ աշխույժ ու խանդավառ երեխայի հետ:

1935 թվականին ավարտելով Թբիլիսիի № 82 դպրոցը լավագույն գնահատական-

հերով, Սարգիսը տեղափոխվում է քաղաքի
№ 38 միջնակարգ դպրոցը: Այդ ժամանակ
հա արդեն 15 տարեկան մի ուշիմ պատանի
էր, որը շուտով իր վրա հրավիրեց դպրոցի
ուսուցչական կազմի և դիրեկցիայի ուշա-
դրությունը: Նրանք մինչև այժմ էլ լավ
հիշողություններ են միայն պահել ժրաջան,
կարգապահ, հիմնալի սովորող Սերգեյի մա-
սին: Սարգիսն այդ դպրոցում հատուկ սիրով
էր սովորում ուսուցիչ լեզուն: Ռուսաց լեզվի
դասատուն ոչ մի ջանք չէր խնայում, որ-
պեսզի ուսումնասիր պատանին որքան հնա-
րավոր է շուտ սովորի ուսուցչին լեզուն, լավ
տիրապետի նրա դադանիքներին:

Փոքր հասակից Սարգիսը մեծ սեր ու-
ներ նվազելու: № 38 դպրոցում սովորելու
տարիներին հա սկսեց զբաղվել հաև նվա-
գով: Նրա հարադատների ու ծանոթների
վկայությամբ, բավական լավ նվագում էր
ջութակ:

Ինչպես ասվեց, Սարգիսը մեծանում էր
հայրենասեր մի ընտանիքում: Հայրը պար-

տիտական էր, իսկ մեծ եղբայրները՝ Արտա-
վազդն ու Օննիկը՝ կոմերիտական էին։
Տանը հաճախ էին հետաքրքիր զրույցներ
լինում քաղխմբականերում, ժողովներում ա-
ռաջ քաշված հետաքրքիր հարցերի շուրջը։
Սարգիսը բարի նախանձով էր հետևում և
երբեմն էլ մասնակցում այդ խոսակցու-
թյուններին, անհամբեր երազելով այն օրը,
երբ ինքն էլ դառնալու է լենինյան կոմե-
րիտիտլիտիտյան անդամ։

Դպրոցում նա միանգամայն արդարաց-
նում էր իրեն։ Հիանալի սովորում էր, լավ
էլ ընկեր էր։ Էլ ինչո՞ւ սպասել։ Եվ 1939
թվին մի օր նա գրեց իր դիմումն ու ներ-
կայացրեց դպրոցի կոմերիտական կազմա-
կերպությանը։

Շուտով կազմակերպության ժողովում
քննության են առնում նրա դիմումը։
Դպրոցի կոմերիտական կազմակերպու-
թյունը միաձայն քվեարկում է, որպեսզի
Սերգեյ Մամբրեի Օհանյանն ընդունվի լե-
նինյան կոմերիտիտլիտյան շարքերը։

Այդ հանգիսավոր օրը Սերգեյը խոստա-

նում է իր ընկերներին սովորել է՛լ ավելի
լավ, դառնալ հայրենիքին օգտակար սովե-
տական քաղաքացի, խոստանում է արդա-
բացնել նրանց հույսը:

Այդ օրվանից նա զգում է, որ կոմերի-
տական տոմսն իր վրա մեծ պարտավորու-
թյուններ է դնում, լավ է հասկանում, որ
այդ տոմսն իր գրպանում ունեցող երիտա-
սարդից ավելի շատ բան է պահանջվում:

Օհանյանը որոշում է այս բոլոր պա-
հանջներին բավարարել, լիովին՝ արդարաց-
նել կոմերիտականի կոչումը:

№ 38 դպրոցում սովորելու առաջին օրե-
րից Օհանյանը սիրում է ռազմական գործը:
Այդ օրերին էր ահա, որ նրա մեջ մի նոր
միտք է ծագում՝ սովորել ռազմական ունե-
ղալրոցում: Երկար մտածելուց հետո Օհա-
նյանը վերջնականապես որոշում է դառ-
նալ հրետանավոր: Ձենքի բոլոր տեսակնե-
րից ամենից շատ հրետանին էր նրան հրա-
պուրում: Ուղիղ նշանառությամբ հրետա-
նուց կրակել թշնամու վրա, շարքից հանել

հրա զորքերին ու տեխնիկան, հրետանու
դիրքանոց ցնցել սար ու ձոր, դաշտ ու
անտառ, այս էր 19-ամյա պատանու ձգտու-
մը, որը հրա ուղեղին հանդիատ չէր տալիս
օր ու գիշեր:

Մի օր հա իր որոշումը հայտնեց ծնող-
ներին, կարծիք հարցրեց հրանցից: Որդե-
սեր ու հայրենասեր ծնողները չհակառակե-
ցին Սարգսի կամքին:

1940 թվականի փետրվարին Օհանյանը
դիմում է տալիս Թբիլիսիի Հրետանային
դպրոցում սովորելու: Նա իր ջերմ ցանկու-
թյունը հայտնում է հետևյալ մի քանի տո-
ղերի մեջ. «Սովորում եմ Թբիլիսիի № 38
դպրոցի 9-րդ դասարանում: Ցանկանում եմ
սովորել ձեր Հրետանային ուսումնարանում,
ուզում եմ լինել փառապանծ Կարմիր Բա-
նակի շարքերում: Խնդրում եմ չմերժեք
խնդիրքս»:

Այս դիմումին կցված էր հաև մի համա-
ռոտ ինքնակենսագրություն և № 38 դպրո-
ցի ԼԿԵՄ կազմակերպության հետևյալ սեղմ
գնահատականը. «Սերգեյ Օհանյանը սովո-

րում է № 38 դպրոցի 9-րդ դասարանում:
Նա ԼԿԵՄ կադմակերպության ամենաակտիվ
և կարգապահ անդամներից մեկն է, տրված
հանձնարարությունները կատարում է ժա-
մանակին և մեծ բարեխղճությամբ: Նա
դպրոցի ավագ հերթապահն է, իր սովորելու
ընթացքում ոչ մի տուժ չի ունեցել:

1940 թվականի փետրվարի 10-ին Սեր-
գեյ Օհանյանն ընդունվում է Թբիլիսիի
Հրեականային դպրոցը և մեծագույն եռան-
դով սկսում մանրամասնորեն ուսումնասի-
րել զենքի իր սիրած տեսակը:

Հավ հրետանավոր դառնալն այնքան էլ
հեշտ գործ չէ: Նա սովորելու էր 10-ից ա-
վելի առարկաներ, որոնց մեծ մասը պահան-
ջում էին մաթեմատիկական գիտելիքներ:
Բարեբախտաբար մաթեմատիկայի հատուկ
սեր և ընդունակություն ունեւր, ուստի դըպ-
րոցն ընդունվելու հենց առաջին օրերից
սկսեց սովորել հիանալի և կարճ ժամանա-
կում դարձավ բոլոր ուսուցիչների հատուկ
հոգատարության առարկան: Այդ դպրոցի
դասամատյանում մինչև այժմ էլ Օհանյանի

անվան դիմաց կարելի է գտնել լավ և գե-
րազանց գնահատականներ միայն:

Հրեականացին դպրոցում նա մտերմանում
է նոր ընկերների հետ: Սերտ կապերով կապ-
վում է հատկապես նրանցից մեկի՝ Պուզի-
րյովի հետ: Այդ հայրենասեր կոմերիտա-
կանը ևս ունի նույն խոհերն ու իղձերը:
Նրան էլ տոչորում էր լավագույն հրեա-
նավոր դառնալու բոլորն ցանկությունը:
Վասիլի Պուզիրյովը և Սերգեյ Օհանյանը
լավ ճանաչեցին միմյանց և առաջին օրերից
թափանցեցին մեկ մեկու հոգու խորքն ու
այնտեղ դրոշմեցին մինչև մահ մտերիմ ըն-
կերների մնալու դաշինքը:

Նրանք Հրեականացին դպրոցի նստարան-
ների վրա ապագայի նկատմամբ պատա-
հեկական վառ երազներ էին մշակում, ծրա-
դրեր կազմում:

Ու մի առավոտ էլ՝ 1941 թվականի հու-
նիսի 22-ի առավոտը, աշխարհը զարթնեց
մի ավազակային հարձակման լուրից: Հիտ-
լերյան հորդաները գաղտագողի, ուխտա-

դրուծ կերպով մտել էին սովետական տե-
րիտորիան և ուզում էին առաջանալ դեպի
մեր երկրի խորքը:

Ինչպես Սովետական Միության բոլոր
աշխատավորներին, այնպես էլ Հրետանա-
յին դպրոցի ուսանողությանն անսահման
զայրույթ պատճառեց հիտլերյան ոհմակնե-
րի լկտի քայլը: Այդ առթիվ հրավիրված
ուսանողական միտինգում ապագա հրետա-
նավորները պատրաստակամութուն են
հայտնում իսկույն մեկնել ռադմաճակատ ու
կրծքով պաշտպանել սոցիալիստական հայ-
րենիքը:

Այդ օրը խոսեց նաև Օհանյանը, խոսեց
հակիրճ, լի ցասումով՝ թշնամու նկատմամբ:
Նա հանդիսավոր կերպով խոստացավ լինել
հայրենիքը պաշտպանողների առաջին շար-
քերում, չխնայել իր կյանքը հանուն սովե-
տական սրբազան հողի պաշտպանության:

— Անեծք ու մահ ֆաշիստական իժե-
րին, — վերջացրեց իր խոսքը բանվոր Մամ-
բրեի որդին և լուռ կանգնեց պատի տակ:

Այժմ, ինչպես Սովետական Միության

ողջ երիտասարդության, այնպես էլ Հրեա-
նային դպրոցի ուսանողության անդուստ
ցանկությունն էր օր առաջ մեկնել բանակ,
հետվել կռվի փոթորկոտ հորձանքի մեջ ու
կրճքով պաշտպանել սովետական հողը:

Ինչքան էլ բոլորի ցանկությունն այդ
էր, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտ
էր սպասել մի առժամանակ: Դեռ նրանք
չէին վերջացրել դասընթացը, մնում էր մոտ
մեկ ամիս:

Անհամբերությունը տանջում էր նրանց:
Ինչքան դանդաղ էին անցնում օրերը, իսկ
ռազմաճակատից ամեն օր նորանոր հեռա-
գրեր էին գալիս, որոնք ցույց էին տալիս,
թե ֆաշիստական հորդաներն ինչպիսի
գազանություններ են կատարում սովետա-
կան խաղաղ քաղաքացիներին նկատմամբ,
ավերում են նրանց տուն ու տեղը, խողխո-
ղում անպաշտպան կանանց ու երեխաներին:

1941 թվականի հուլիսի 17-ին Սերգեյ
Օհանյանը փայլուն կերպով ավարտում է
Հրեա-նային դպրոցը և իր մտերիմ ընկե-

ըոջ՝ Պուղիրյովի հետ մեկնում կարմիր Բա-
նակ:

Երկու դպրոցական ընկերները՝ բանակ
մեկնելու օրը ողջերթի եկած ծանոթներին
ու բարեկամներին հրաժեշտ տալով՝ մի ան-
գամ ևս հանդիսավոր կերպով խոստանում
են ու երգվում մինչև իրենց արյան վերջին
կաթիլը պաշտպանել սոցիալիստական հայ-
րենիքը, իրենց ամբողջ գիտելիքը, ռազմա-
կան հմտությունը ծառայեցնել հօգուտ Փա-
շիզմի վերջնական ջախջախման: Ապա հա-
րադատներից ու բարեկամներից բաժանվե-
լուց հետո երկու ընկերները բռնում են մի-
մյանց ձեռքը և լուռ ուխտում մարտերում
հույնապես լինել միասին, մինչև մահ մնալ
մտերիմ ընկերներ:

Օհանյանների ընտանիքից Սերգեյը եր-
րորդն էր, որ մեկնում էր բանակ: Նրա եր-
կու եղբայրները՝ Արտավազը և Օննիկը՝
արդեն ռազմաճակատում կռվում էին թըշ-
նամու դեմ:

Կարճ ժամանակ թիկունքային ծառա-

յուլթյուն կատարելուց հետո Օհանյանը և Պուղիրյովը մեկնում են ռազմաճակատ, որպես հրետանավորներ:

Մարտական գործողությունների հենց առաջին օրերից Սերգեյը հատուկ հմտություն հանդես բերեց ռազմական գործում և իր վրա գրավեց հրամանատարության ուշադրությունը: Շուտով նա դարձավ հրետանային մարտկոցի հրամանատար:

Մարտական բարդ պայմաններում, փութորկոս կռիվների մեջ է՛լ ավելի էր կոփվում համարձակ, անվախ, հնարագետ հայ մարտիկը: Խնչպիսի աննպաստ ու բարդ պայմաններ էլ լինեին, 20-ամյա հրամանատարը չէր հուսահատվում, իսկույն գլխում էր վտանգավոր գրությունից դուրս գալու ելքը, այնպես էր մանևրում, որ թշնամու կողմից պատրաստված թակարդին դոհ էին գնում հենց իրենք՝ գերմանացիները:

— Պատերազմում ամեն մի փորձանքից հնարավոր է դուրս գալ, եթե մարդ գլուխը չկորցնի,— ասում էր նա հաճախ:

Յուրաքանչյուր հաղթանակից, փայլուն
տակտիկական հնարքից հետո է՛լ ավելի էր
բարձրանում Օհանյանի հեղինակությունը
թե՛ մարտիկների և թե՛ հրամանատարների
աչքում:

Մի մութ գիշեր փոքրիկ պուրակում
թշնամին շրջապատում է Օհանյանի մարտ-
կոցը, օղակն աստիճանաբար սեղմվում է:
Խիզախ լեյտենանտը նկատում է, որ թըշ-
նամին մտադիր է առավոտյան հարձակվել
իրենց վրա, ուստի որոշում է կատարել հա-
մարձակ քայլ և գիշերով հեռանալ այդտե-
ղից, նոր գիրքեր գրավել: Սաստիկ մութը
խանգարում է նրանց շարժմանը: Օհանյա-
նը գտնում է դրա ելքը. խկուշն ճարում է
լուսատիտիկներ, դնում հրանոթների վրա
և սկսում դանդաղ շարժվել առաջ:

Առավոտյան մարտկոցը արդեն կանգ-
նած էր նոր գիրքերում: Գերմանական հը-
րանոթները դեռ չէին կրակում, ըստ երե-
վույթի՝ հետախուզում էին, երբ Օհանյանի
մարտկոցը տեղատարափ կրակով հողին հա-

վասարեցրեց թշնամու թնդանոթներն ու
գետին փռեց տասնյակ ֆաշիստների դիակ-
ներ:

Մարտիկներն անչափ հարգում ու սիրում
էին իրենց երիտասարդ հրամանատարին,
ճշտությամբ կատարում նրա բոլոր հրա-
մանները, նույնիսկ այն դեպքերում, երբ
դրանք կապված էին մեծ վտանգների հետ:

Օհանյանի մարտկոցի անձնակազմը բաղ-
կացած էր 16 խիզախ մարտիկներից, այդ՝
ժողովուրդների ստալինյան համերաշխու-
թյունը փայլուն կերպով դրսևորող մի կուռ
կռիվակալ էր, այնտեղ կային և՛ ռուսներ,
և՛ հայեր, և՛ ադրբեջանցիներ, և՛ ուկրաի-
նացիներ: Բոլորը սիրում էին իրենց աշ-
խույժ, երիտասարդ հրամանատարին: Նրան
սիրում ու հարգում էին ինչպես Մովսես
Ղուլյանը, Կարո Շահվալիկը, Սուրեն Հարու-
թյունյանը, այնպես էլ իր դասընկեր Վա-
սիլի Պուդիրյովը, Սերգեյ Վավիլովը, Ֆեո-
դոր Բալեստան, Ստեպան Լազարևը, կամ
Ասլան Վելիկը, Իսմայիլ Մամեդովը, Վելի-

խան Վելիխանովը, Փազլի Ահմեդովը, Վա-
սիլի Տկաչենկոն, Ֆեոդոր Աբրամենկոն:

Տարբեր ազգությունների պատկանող,
տարբեր ռեսպուբլիկաներից եկած, տարբեր
կենցաղի ու սովորությունների տեր այդ
երիտասարդներն ունեին մի ընդհանուր
կապ, այդ՝ ստալինյան դարաշրջանին հա-
տուկ ինտերնացիոնալ դաստիարակությունն
էր, որն ամենակարճ ժամանակաշրջա-
նում նրանց դարձրեց ճշմարիտ եղբայր-
ներ: Մարտից հետո՝ ժամանակավոր հան-
գըստի պահերին, նրանցից յուրաքանչյուրը
պատմում էր իր երկրի այս կամ այն շրջա-
նի, մարդկանց սովորությունների, իրենց
լեզվի ու գրականության հետաքրքիր երե-
վույթների մասին, իսկ մյուսները հափըշ-
տակությամբ լսում էին ու իրենց հերթին
պատմում ուրիշ հետաքրքիր էպիզոդներ:
Ամիսների սերտ մտերմությունն այնքան
նպաստեց նրանցից յուրաքանչյուրին՝ ծա-
նոթանալու մյուս ժողովուրդների կուլտու-
րային ու կենցաղին, որ նրանք որոշեցին
պատերազմից հետո էքսկուրսիայի կարգով

այցելել մեկ մեկի երկիրը և ավելի մոտիկից ծանոթանալ միմյանց հայրենիքին:

Երբ նրանցից մեկն ու մեկը որևէ բանի կարիք էր դգում, իսկույն շտապում էին բավարարել մյուսները: Թիկունքից ստացված նամակները կարդում էին միասին, պատասխանում միասին, նույնիսկ գիտեն մեկ մեկի ծնողների, ազգականների անունները: Բոլորը ջերմ սիրով սիրում էին միմյանց, իսկ ամբողջ խումբը կրկնակի սիրով սիրում էր Սերգեյ Օհանյանին:

«Օհանյանն այն մարդկանցից էր,— գրում են նրա մասին ռազմաճակատի թըղթակիցներ Միխ. Կոտովը և Վլ. Լյասկովսկին,— որոնք առաջին իսկ հանդիպումից ուշադրություն են դրավում իրենց ճշկուն խելքով և զարմանալի եռանդով»:

Ռազմաճակատում սովորաբար իրենց խիզախություններով աչքի ընկած հայ մարտիկներին համեմատում են հայ հին զորավարների ու հերոսների հետ, հատկապես Սասունցի Դավթի հետ, որի մասին գիտեն

Սովետական Միութեան բոլոր ժողովուրդ-
ները:

Օհանյանին էլ հրամանատարութեանը
համեմատում էր Սասունցի Դավթի հետ: Մի
մեծ ճակատամարտից հետո, երբ քրտնաթոր
լեյտենանտը հանգստանում էր իր մարտիկ-
ների հետ ու մի պահ երևակայութեամբ
թռչում Թբիլիսի՝ իր ծնողների մոտ, նրան
մտանում է բանակի գեներալը, շնորհավո-
րում Օհանյանի մարտկոցի հաջողութեանը,
հատկապես երիտասարդ հրամանատարի խի-
ղախութեանը, և սեղմելով նրա ձեռքը՝ ա-
սում:

— Իսկապես դու Դավթի արժանավոր
սերունդն ես:

Սերգեյ Օհանյանի մարտկոցը բաղմաթիվ
մեծ ճակատամարտեր է մղել Փաշխատների
դեմ: Մարտկոցի մարտական հաշվում գրանց-
ված էին հարյուրավոր սպանված Փաշխա-
տներ, տասնյակ խփված տանկեր, թշնամու-
ռչնչացված բաղմաթիվ կրակային կետեր:

Մարտկոցը դեռ շատ բաներ է կատարել,

որոնք ոչ մի տեղ չեն գրանցվել, որոնց մասին ոչ ոք դեռ չի պատմել, գրանց իսկական վկաներն են եղել անտառներն ու տափաստանները, սարերն ու ձորերը և իրենք՝ 16 կոմերիտականները:

Բայց գրանցից և ոչ մեկը հնարավոր չէ համեմատել այն մեծ ճակատամարտի հետ, որը փառքով պսակեց 16 խիզախ հայրենասերներին ու նրանց անուներ, որպես արի-ուժյան և համարձակուժյան, հայրենասիրուժյան ու քաջագործուժյան սիմվոլ, տարածեց ողջ ռազմաճակատում ու թիկունքում:

Այդ մի ճակատամարտ էր, որին ճակատային թերթերը էջեր նվիրեցին, որի մասին բանաստեղծները պոեմներ գրեցին, ղինթոթակիցները՝ գրքեր, իսկ մարտիկներն սկսեցին պատմել բերնե բերան, այժմվանից այն դարձնելով ժողովրդական ստեղծագործուժյան նյութ:

Մարտեր կան, որ իրենց մասշտաբով փոքր են, բայց դեպքերի ուժեղ բախման

ու գիտակցված ընդգրկումով հավասար են
մեծագույն ճակատամարտերի:

Այդպիսի մի ճակատամարտ էր Օհանյա-
նի մարտկոցի անհավասար կռիվը գերմա-
նացիներին դեմ:

Դեպքը պատահեց այսպես:

Սերգեյ Օհանյանի հրետանային մարտ-
կոցն այդ օրը հանդստանում էր մի գերեզ-
մանաթմբի վրա: Հետախուզությունը զե-
կուցեց, որ գերմանական 50 տանկեր շարժ-
վում են դեպի արևելք:

Մարտիկներն իսկույն մոտեցան իրենց
հրանոթներին, յուրաքանչյուրն իր տեղում
սպասում էր:

Նրանց պաշտպանած բլուրը գտնվում
էր Ռոստովից արևմուտք և ստրատեգիական
խիստ կարևոր մի կետ էր: Այդ բլուրը գրա-
վելուց հետո գերմանացիներն ավելի հեշտ
կարող էին առաջ շարժվել: Դրանից առաջ
սովետական հրետանավորները մի քանի
անգամ հետ էին մղել թշնամու գրոհները:

Ֆաշիստներն այս անգամ հարձակվում էին
մեծ ուժերով, 50 տանկի օժանդակությամբ:

Գորշ հրեշները սողում էին առաջ: Հրե-
տանավորները մարտական դրության մեջ
սպասում էին հրամանատարի որոշմանը:
Դրությունը լուրջ էր, կարելի է ասել, նույ-
նիսկ վտանգավոր, այդ լրջությունն ու վը-
տանգավորությունն զգում էին բոլորը,
զգում էր հատկապես նրանց հրամանատարը:
16-ի և 50-ի փոխհարարերությունն ամե-
նախոսուն փաստն էր մոտեցող տագնապի
մասին:

Ջնալած ստեղծված վիճակի ծանրու-
թյանը, հրամանատարն իրեն պահում էր
շատ հանգիստ ու սառնարյուն, իսկ այդ
ուժ էր տալիս մյուս մարտիկներին:

Տանկերը մոտենում են ու մոտենում:
Մարտկոցի բանակայինները դառնում են
ավելի ու ավելի անհամբեր, ջղային: Բո-
պեական հապաղումը կարող է կործանիչ
լինել, կարող է շարքից հանել մարտկոցը և
ճանապարհ բաց անել դեպի առաջ:

Առաջ շարժվող սև դանդաղացիները, որոնք

իրենց ահարկու ժխտով ուղում են սարսա-
փի մեջ պահել պատանիներին, կարող են
գալ ու տրորել բոլորին, իրենց թրթուրների
տակ ճգմել հայրենասեր կոմերիտականնե-
րին:

Լարված, կրիտիկական ըույե է, որի
էությունը մարդկային բանականությունը
դժվար կարող է ընդգրկել:

Այդ՝ ըստ էության ահավոր ըույեին հան-
կարծ հնչում է հայ հրամանատարի առնա-
կան ձայնը.

— Կրակ...

Տրվում է առաջին համադարկը: Արկե-
րից մեկն ընկնում է թշնամու առաջավոր
տանկի թրթուրի տակ ու կանգնեցնում
այն, իսկ երկրորդ համադարկը կանգնեց-
նում է մյուս տանկը:

Սովետական մարտիկները նկատում են,
որ թշնամու տանկային ուժերի մեջ ինչ որ
խուճապ կա, իրարանցում: Հուսահատ՝ ուղիղ
հարվածելու հնարավորությունից, անհույս
մաներների են դիմում մնացած տանկերը:
Նրանցից երկուսը փորձում են շրջանցել

բլուրը: Գերմանացիները կարծում են, որ
այդ խորամանկ քայլով կարող են հարվա-
ծել մարտկոցի խիզախ պաշտպաններին:

Սակայն մի քանի դիպուկ համազարկով
նրանք էլ շարքից դուրս են գալիս:

Օհանյանը մեծ եռանդով էր դեկավա-
րում կռիվը, հմուտ հրետանավորը հրահան-
գում է կրակել աջ կամ ձախ, չհեռանալով
հրանոթի մոտից:

— Ապա, մեկ էլ, մեկ էլ: Խփեցեք նրանց
ատամներին, այդպես, Տկաչենկո, Բալես-
տա, — լսվում է նրա ձայնը:

Թշնամու տանկերից մի ուրիշը, որ նույն-
պես ուղղում էր հետևել նախորդների օրինա-
կին, խփվում է տեղն ու տեղը և հոլի նման
պատվում իր առանցքի շուրջը:

Առաջին ուժեղ հարվածների հաջողու-
թյունն է՛լ ավելի է ոգևորում մարտիկնե-
րին, նրանց ներշնչում նոր եռանդ: Հրետա-
նավորներից յուրաքանչյուրն այդ ըն-
պեին ոչինչ չէր զգում ու տեսնում բացի
դիմացից շարժվող թշնամուց, որին անպայ-
ման պետք է ոչնչացնել, ոչնչացնել ինչ

գնով էլ լինի: Հրեաժողովուրդը թնդացնում էր աշխարհը, ցնցում այն հողաթումբը, որի վրա դիրք գրաված 16 հայրենասերներն օրհասական պայքար էին մղում թշնամու դեմ:

Օհանյանը մի կողմից կրակում էր թշնամու վրա, դեկավարում մարտկոցի կրակը, իսկ մյուս կողմից՝ շարունակ հետևում էր իր ընկերներին, ստուգում, թե նրանցից մեկն ու մեկին որևէ փորձանք չի՞ պատահել:

Թշնամին մոտենում էր... Սովետական հրեաժողովուրդների և գերմանական տանկերի միջև գտնվող տարածութունն աստիճանաբար կարճանում էր:

Իսկ արկերը տեղում էին հա տեղում:

Այդ կրիտիկական բոլեին մի արկ պայթեց, և անվախ հրեաժողովուրդներից մեկը՝ Վելիկը վիրավոր ընկավ գետին: Այդ առաջին դոհն էր, որ տալիս էր 16 հոգուց բաղկացած մարտկոցը: Ուրեմն մնացին 15 հոգի: Ցավալի ու տխուր էր պատահածը: Այլ դեպքում մարտկոցի հայրենասեր կոմերիտա-

կանները կշրջապատեին վիրավոր մարտիկին ու երկար կզբաղվեին նրա վերքով, ջուր կսրակեին նրա երեսին, կկապեին նրա վերքերը, խնամքով կփաթաթեին ու նրան կփոխադրեին դաշտային հիվանդանոց: Բայց այժմ, երբ մետք առ մետք առաջանում էր թշնամին, երբ ամեն բոլե վտանգը մեծանում էր, հնարավոր չէր զբաղվել թանկագին ընկերոջ վիճակով:

Օհանյանը հաղիվ ժամանակ ունեցավ կարդադրելու, որ վիրավորին տանեն գետնափորը:

Կռիվը գնալով ավելի ու ավելի թեթանում էր: Գերմանական 5 տանկ, շղթա կադմած, փոթորկոտ կրակ են տեղում գերեզմանաթմբի վրա, որից հետո միանգամից սրընթաց առաջանում են դեպի սովետական մարտկոցը:

Օհանյանի խիզախ ընկերները մեկը մյուսի հետևից խփում են ֆաշիստական մի քանի տանկ: Ծուխն ու փոշին, վառոդի, խանձված իրերի հոտը բռնում է ամեն կողմ:

Կռվի այդ թեժ պահին Օհանյանը նկատ

տում է, որ դարձյալ թշնամու մի արկ ընկ-
նում է հրանոթի վրա, հողի ու քարի մի
շատրվան ժայթքում վերև: Երբ փոշին ցըր-
վում է, խիզախ հրամանատարը տեսնում է
իր ընկերներից երկուսի՝ Շահվալեի ու Աբ-
րամենկոյի անշնչացած դիակները: Այդ
ցասման նոր ալիք է աալիս մարտկոցի
հրամանատարին, նա սովելի ուժգին ու դի-
պուկ հարվածներ է տեղում թշնամու տան-
կերի վրա: Անհավասար կռիվը, սակայն,
խլում է հայրենասեր հրետանավորներից
մեկի կյանքն էլ, իր պոստում հերոսի
մահով ընկնում է Մովսես Ղուլյանը, Օհա-
նյանի հայրենակիցն ու մտերիմը:

Չնայած հրետանավորներից չորսը շար-
քից դուրս էին եկել, սակայն մնացածները
կռիվը շարունակում էին նույն ուժգնու-
թյամբ ու խիզախությամբ:

Սովետական արկերը նույն թափով տե-
ղում էին թշնամու դլխին: Փաշխատներն
իզուր դանազան փորձեր են անում թևային
հարված հասցնելու սովետական մարտկոցին:
Հայրենասեր երիտասարդները միշտ կան-

խում են նրա նենգ դիտավորութիւնը և
կամ գետնին մեխում նրա տանկերը, ստի-
պում նահանջելու:

Սովետական մարտիկներին համառու-
թիւնն ավելի ու ավելի է կատաղեցնում
թշնամուն, որն օրհասական ճիգ է անում
առաջ սողալու:

Այսպէս շարունակվում է մի քանի ժամ:
Գերմանացիներին ոչ մի կերպ չի հաջող-
վում մոտենալ բարձունքին:

Առաջին լարված գրոհից հետո թշնամին,
կորցնելով 6 տանկ, ջրվում է:

Թվում էր, թե ֆաշիստները հրաժարվե-
ցին անխմաստ գրոհից:

Օհանյանը, սակայն, համոզված էր, որ
նենգ թշնամին էլի կփորձի հարձակվել:

Եվ իսկապէս, գերմանացիներն ուժեր
կենտրոնացնելով, նորից անցնում են կռիւ:
Անվեհեր հրամանատարն իր մարտիկներին
դարձյալ նախապատրաստում է մարտն ըն-
դունելու: Զոհված ընկերներին դիակներին
առջև կանգնած 12 անվեհեր հրետանավոր-

հերը հանում են իրենց գլխարկները և հան-
դիսավոր կերպով երդվում բարձունքը հտալ
թշնամուն, կռվել մինչև վերջին շունչ, մինչև
վերջին մարտիկի վերջին հնարավորությու-
նը: Այդ մի խորհրդավոր, միաժամանակ
ծանր պահ է, որ մարդկանց անչափ հու-
զում է, բայց արտասուքը զսպում նրանց
կոկորդում: Այդ մի րոպե է, որ ծնում է մի
բառ միայն՝ վրեժ . . .

Վրեժ իրենց ընկերների մահվան համար,
վրեժ գերմանացիների անհամար գազանու-
թյունների համար: Նրանցից ամեն մեկի
հշանարանն է՝ եթե դու վիրավորված ես ձախ
ձեռքից, կրակիր աջ ձեռքով, եթե կորցրել
ես մի աչքդ, թշնամուն հետապնդիր մյուս
աչքով:

Այսպես են գրել 16 խիզախների մար-
տական կյանքը պատկերող զինթղթակից-
ներ Լյասկովսկին և Կոտովը:

Ժամանակավոր դադարից հետո թշնամին
նորից անցնում է գրոհի: Նորից ֆաշիստա-
կան տանկերը սողում են դեպի առաջ, դեպի
արևելք, նորից սովետական խիզախ մարտ-

կոցը՝ Ռոստովի մատույցներէց մեկի այդ
պաշտպան փոքրիկ ամրոցը՝ սկսում է իր
հռժկու կրակը թշնամու դեմ:

Կրկին անգամ բորբոքվող մարտերում
աննկարագրելի արիություն են ցույց տա-
լիս Սերգեյ Օհանյանը, Վասիլի Պուզիրյովը,
Ֆեոդոր Բալեստան և Սերգեյ Վավիլովը:
Նրանք յանկանում են որքան կարելի է
շուտ վրեժ լուծել իրենց ընկած ընկեր-
ների համար, է՛լ ավելի բարձր պահել լենի-
նյան կոմերիտականի պատվավոր անունը:

Փաշխատական 15 տանկ շարժվում էին
դեպի բլուրը, իսկ Օհանյանի մարտկոցի
անձնակազմը գնալով ավելի ու ավելի էր
նոսրանում:

Խիզախի մահով ընկնում է նաև Վելի-
խան Վելիխանովը:

Սովետական հրանոթը մի պահ դադա-
րեցնում է կրակը: Գերմանացիները կար-
ծում են, թե ամբողջ անձնակազմը ոչնչաց-
ված է: Նրանց տանկերը մոտենում են՝
հազիվ 500 մետրի վրա են, կարմիրբանա-
կային Հարությունյանը հրանոթային դի-

պուկ կրակով խփում է գերմանական մի
տանկ, որը մի քանի վայրկյան հավասարա-
կշռությունը կորցրած՝ այս ու այն կողմ
թեքվելուց հետո բոցավառվում է: Սարսա-
փած գերմանացիները դուրս են թռչում
բոցավառվող տանկից, բայց տեղն ու տեղը
գնդակահարվում են սովետական մարտկոցից
արձակված հրացանային գնդակներից:

Թշնամին ուժեղ կրակ է բաց անում Հա-
րությունյանի հրանոթի վրա: Օհանյանը
տեսնում է, թե ինչպես նրա մոտ պայթած
մի արկից զոհվում է հաւ Սուրենը:

Այժմ Սերգեյ Օհանյանն աշխատում է
թե՛ որպես նշանառու և թե՛ որպես արկեր
մատուցող: Տանկային ուժեղ հարձակումից
10 րոպե հետո նա արդեն խփել էր 3 մե-
քենա: Նրիտասարդ հրամանատարը կռվում
էր արիությամբ, կռվում էր որպես մի դյու-
ցազուն, կարծեք նա վերածնված Սասունցի
Դավիթը, կամ Դավիթ բեկը լինել, նրան-
ցից խիզախ, նրանցից անվեհեր, նրանցից
անվախ: Նա այդ րոպեին մի մարմնացած

ցասում էր, որ ուզում էր իր ամբողջ ուժն
ու էներգիան, իր վերջին ճիգն ու հնարա-
վորությունը, իր վերջին կաթիլ արյունն
ու ուժն օգտագործել՝ թշնամուն ավելի ու
ավելի շատ հարված հասցնելու համար, մի
տանկ ավելի խփելու համար: Այդ բոլորին
հրա ուղեղը քիչ էր աշխատում, նա հնա-
րավորություն չունեի մտածելու, դատելու
շատ բաների մասին, միայն մի նախադա-
սություն էր հրա մագնիսացած ուղեղի
ծալքերի մեջ ամուր մեխվում՝ թող մեռնեն
իրենք, թող մեռնի նույնիսկ ինքը, եթե
այդ պահանջի կռվի ընթացքը, բայց բլու-
րը, իր ընկերների արյամբ ողողված այդ
սրբազան բլուրը, Ռոստով տանող ճանա-
պարհի պատվարը՝ պետք է մնա սովետա-
կան, պետք է պահել մինչև նոր օժանդակ
ուժերի հասնելը: Գերմանական ոչ մի սա-
պոգ չպետք է տրորի իր ընկերների թարմ
արյունով ողողված փխրուն հողը:

Այս էր հրա վճռական որոշումը և հենց
այդ որոշումն էլ ուժ ու եռանդ էր տալիս
քաջ հրամանատարին: Թշնամու տանկերի

Թիւլը գնալով պակասում էր, կողմերի հարաբերությունը հետզհետե փոխւում էր հօգուտ սովետական մարտիկների, որոնց շարքերն էլ, ամիսն, նոսրանում էին... Ողջ՝ հրանոթների մոտ կանգնած մարտիկները մխիթարւում էին նրանով, որ դեռևս իրենց անվեհեր հրամանատարը կանգնած է իր պոստում ու հարվածում է թշնամուն, ղեկավարում է իրենց: Նրանք բոլորը լավ էին ճանաչում Օհանյանին, համոզւած էին, որ նա կկռւի մինչև իր արյան վերջին կաթիլը:

Հայ հրամանատարի գիպուկ արկերը թշնամուն մեծ զնառ էին պատճառում: Ամեն մի հաջող գիպումից հետո նա կրակում էր նոր եռանդով, միշտ վրեժի կայծը սրտում, ցամառն հուրն աչքերի մեջ:

Փոթորկոտ կռւի այդ լարւած ու վճռական պահին, երբ հայ լեյտենանտն իր տարերքի մեջ էր, ու ոչինչ, ոչինչ չէր տեսնում բացի թշնամուց, որին պետք էր անպայման խփել, գերմանական մի արկ պայթում է նրան մոտ և խլում խիղախ մար-

տիկի, աննկուշն ռազմիկի, հայրենասեր կոշ
մերիտականի երիտասարդ կյանքը:

Մի պահ նորից դադարում է հրաձգու-
թյունը: Այդ, կարծես, խոր հարգանքի ու
հրաժեշտի համար էր: Նրա երեք ընկերները՝
իր օգնական Պուզիրյովը, Ֆեոդոր Բալես-
տան և Լազարևը մի պահ կանգնում են
այնքան սիրելի ու սրտակից հրամանատա-
րի անշնչացած դիակի մոտ, նայում նրա
երիտասարդ դեմքին ու մի պահ գլխիկոր
հարդելով նրա հիշատակը, հուզումնա ու վիշ-
տը մամլած իրենց սրտում, կրկնում են մեծ
երգումը, որը այժմ ամրապնդվում էր երի-
տասարդ հրամանատարի կարմիր արյան
մակարդով:

— Կռվել թեկուզ երկու հոգով, մեկ հո-
գով, նույնիսկ վիրավոր վիճակում, մահա-
մերձ վիճակում, այս էր Օհանյանի դաս-
տիարակած հրետանավորներից վերջին ե-
րեքի հաստատ ուրոշումը:

Հրաձգության ժամանակավոր դադարը
գերմանացիներին կարծել է տալիս, թե ա-

մեն ինչ վերջացել է, նորից նրանց տան-
կերը համարձակ շարժվում են առաջ: Բլուրի
վրա մնացել էին Ֆեոդոր Բալեստան, լեյ-
տենանտ Պուզիրյովը և կարճիրբանակային
Հաղարենը: Հաղարենին հաջողվում է խփել
գերմանական մի տանկ: Պուզիրյովը մոտ է
թողնում թշնամու մի ուրիշ տանկը և դեմ
առ դեմ կրակում նրա վրա: Բոցավառվում
է գերմանական գորշ մեքենան, ֆաշիստա-
կան մյուս տանկերը նորից ուժեղ կրակ
են բաց անում, վիրավոր ընկնում են նաև
Հաղարեն ու Պուզիրյովը:

Մարտկոցում մնում է միայն Ֆեոդոր
Զախարովիչ Բալեստան:

Նա չի ուզում արտաավարել սովետական
մարտիկի անունը, ուզում է թանկ ծախել
իր կյանքը, իր մահը հավերժացնել հայ-
րենասիրական մի մեծ գործով: Բռպե առ
բռպե սպասվում էին սովետական օժանդակ
ուժեր, իսկ թշնամու տանկերից միայն մեկն
էր մնացել: Ինչքան լավ կլինե՞ր՝ եթե կա-
րողանա այդ մի տանկն էլ շարքից հանել,

նետուժ էր արկերը մեկը մեկից ուժեղ, բայց
տանկը շարժվում էր առաջ:

Պետք էր անսպասման, ինչ գնով ուղղում
է լինի, կանգնեցնել ֆաշիստական այդ հրե-
շը, նա հավատացած էր, որ մի քանի ըն-
պիսից բլուրը կլինեիր սովետական նոր ուժե-
րի ստրատեգիական բազան: Ապա ինչ ա-
նել՝ մեռնել, բայց չթողնել, որ տանկն
առաջանա, ու մեռնել ամենասարսափելի
ծանր մահով, որը միայն վեպերում են
մարդիկ կարգացել և որը, սակայն, Հայրեն-
ական պատերազմի օրերին իրականու-
թյուն դարձավ, հայրենիքի սերը շատ շա-
տերին, որոնց թվում և անմահ Գաստելո-
յին դրդեց այդպիսի մահով հավերժացնել
հայրենիքի պաշտպանի անունը:

Բալետան վերցնելով վերջին նռնակ-
ները, կապում է իր մեջքին ու հրաժեշտ
տալով իր երիտասարդ կյանքին, հայրենի
հարազատ սար ու ձորին, իր ծնողներին ու
ողջ տիեզերքին, սահում է բլուրն ի վար,
դեպի առաջ, դեպի գերմանական տանկը,
դեպի ծանր մահը, ու պառկում այն փոսի

մոտ, դեպի ուր ընթանում է ֆաշիստական
տանկը:

Թշնամու մեքենան այնքան է մոտենում,
որ Բալեստան արդեն տեսնում է նրա թըր-
թուրները, այդ անբացատրելի և աննկա-
րագրելի մի բնույթ է, որի մեծութունն ան-
ընդգրկելի է, նույնիսկ անըմբռնելի: Թըշ-
նամու տասնյակ տանկերից միայն այս
մեկին էր հաջողվել մոտենալ գերեզմանա-
թմբին, իսկ այժմ նրա դեմ կանգնած էր
Օհանյանի մարտկոցի խիզախներից վերջի-
նը: Թողնել, որ անցնի տանկը, թե...
Բայց ինչ դատելու ժամանակ է: Բալեստան
ամրացնում է իր մեջքին նռնակների կա-
պոցն ու... մի ակնթարթում նետվում թըշ-
նամու տանկի տակ:

Հավում է ուժեղ պայթյուն... կարծեք
սար ու ձոր իրար են անցնում: Ի՛նչ է պա-
տահում դրանից հետո, ո՞վ է իմանում, դեպ-
քի ականատես վկաներն անխոս ժայռերն
են ու ձորերը: Այս բոլորը տեսնում է մի
մարդ միայն, Օհանյանի մարտկոցի միակ
ծանր վիրավոր մարտիկը՝ Վելիկը, որը գետ-

համարից տեսնուած է իր այնքան սիրելի
ընկերներին օրհասական պայքարը նենգ
թշնամու դեմ, պատմում վրա հասած օժան-
դակ ուժերի հրամանատարին ու մեռնում:

Սերգեյ Մամբրեի Օհանյանն ընկալ
որպէս խիզախ, աննկուն մարտիկ, որպէս
կրակոտ, ջերմ հայրենասեր, Լենինի-Ստա-
լինի պարտիային նվիրված անձնակեր կոմե-
րիտական: Այժմ նրա պաշտպանած բլուրը
հորից սովետական է, նրա վրա ծածան-
վում է Կարմիր դրոշ, այդ դրոշի ծածա-
նումն ապահովող 16 խիզախները հանդիմ
են մի թմբի տակ, որի վրա գրված է՝
«Այստեղ թաղված են 16 հերոս ռազմիկ-
ներ: Հավերժ հիշատակ հերոսներին»: Այդ
մի համեստ արձանագրություն է, գրված
պատերազմի այս փոթորկոտ օրերին, ժա-
մանակի սուրացող թեից խլելու, մոռացու-
թյան չտալու համար իրենց կյանքը հայրե-
նիքին զոհած հերոսների անունները: Կանց-
նեն տարիներ, նրանց արյան գնով ազա-
տագրված սովետական ժողովուրդն ըստ ար-

Ժանավույն կգնհատի հերոսներին: Փառքով
պատկաժ այդ հողաթմբի վրա կկանգնի
հոյակապ հուշարձան ու նրա վրա տակե տա-
ռերով կքանդակի 16 անմահ հերոսների
շողշողուն անուաները: Մարդիկ, ճակատա-
յին թերթերի սյուսակներից, ականատեա-
ների հիշողություններից և հարազատների
նամակներից դուրս կբերեն անմահ հերոս
Օհանյանի մարտական ողջ կյանքն ու
կհանձնեն գրքերին, հերոսի հիշատակին տա-
լով մի նոր, ավելի մնայուն, հավերժական
կյանք, որպեսզի ինչքան էլ հողմերը լիզեն
հողաթմբի վրա կանգնած հուշարձանը, փո-
թորիկները փորձեն մաշել նրա անունն ու
ազգանունը, տպագիր խոսքն ապրի հավետ
ու հայ ժողովրդի անմահ զավակ Սերգեյ
Մամբրեի Օհանյանի հիշատակը հազարա-
մյակներ հետո ոգևորի հետագա սերունդնե-
րին:



Սովետական կառավարութենը բարձր
գնահատելով Օհանյանի և նրա անվեհեր

ընկերներին հայրենիքին մատուցած ծառայությանները, արժանի գնահատականը ավելց նրանց սխրագործություններին:
ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության թվով 1943 թվի փետրվարի 22-ի հրամանագրով Սերգեյ Մամբրեի Օհանյանին, Վասիլի Իվանովիչ Պուզիրյովին և Ֆեոդոր Զախարովիչ Բալեստային շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում:

Հայ ժողովուրդը պարծենում է իր անվեհեր հերոսով: Փառք նրա հիշատակին: Թող հավերժ ապրի Օհանյանի անունն ու մարտական կյանքը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043246

[104]

180.

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

A $\frac{2}{1}$
6915

11886